**Արձանագրություն N 3**
**ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ ծածկագրով ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

11 փետրվարի 2026թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Սիմոնյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Բադալյանը, Ս. Ալեքսանյանը, Ն. Մանուկյանը և Ս. Աբազյանը
Քարտուղար՝ Ս. Գալստյան

**Մասնակից ընկերության կողմից ներկայացված շտկման փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ**

---

Ջրային կոմիտեի կարիքների համար Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Ջրաշենի պոմպակայանի 3 հազ.խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգման և Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ՆԿ369+30 հատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ.խմ ծավալով ՕԿՋ–ի հիմնանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ** ծածկագրով ընթացակարգի մասնակից **«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ն** և **«Միկան» ՍՊԸ-ն,** գնահատող հանձնաժողովի 05.02.2026 թվականի թիվ 2 որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացրել են արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ փաստաթղթերը:

Ներկայացված փաստաթղթերով մասնակիցները շտկել են արձանագրված անհամապատասխանությունները:

**Հանձնաժողովի որոշումը**

---

Հիմք ընդունելով **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ** ծածկագրով հրավերի 8.9 և 8.10 կետերը, ընթացակարգի մասնակցների հայտով ներկայացված (այդ թվում շտկմամբ) փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ** ծածկագրով ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Ռիջիդ» ՍՊԸ-ին:

1.1 Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ** ծածկագրով ընթացակարգի համար անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորրորդ աշխատանքային օրը ծանուցել **ՋԿ-ԳՀԽԾՁԲ-26/1-Տ** ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| նախագահ | ________________ | Ա. Սիմոնյան |
| անդամներ | ________________ | Է. Բադալյան |
| | ________________ | Ս. Ալեքսանյան |
| | ________________ | Ն. Մանուկյան |
| | ________________ | Ս. Աբազյան |
| Քարտուղար | ________________ | Ս. Գալստյան |